Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Իսահակյանի քնարերգությունը սիրային նամակների ուղեկցությամբ»

Հայոց լեզվի և գրականության

I խումբ

Մարինե Յարիջանյան

Մ. Գյորգիսյանի անվ. h 158

հիմնական դպրոց

2023 Երևան

«Իմ բոլոր բանաստեղծությունները գրված են որևէ առիթով, դրանք համակցված են իրականությամբ դրանք հող ունեն և հիմք: Կյանքի հետ կապ չունեցող բանաստեղծությունները իմ աչքում ոչինչ բաներ չեն»,- ասել է Ավետիք Իսահակյանը:

Ավետիք Իսահակյանը հայ բազմադարյան գրականության այն մեծ ներկայացուցիչներից է, որոնց նվիրական անունները զարդարում են հայ ժողովրդի հոգևոր մշակույթի պատմության էջերը:

Մեծ բանաստեղծները՝ հազվագյուտ ծնունդները, իրենց կյանքի ճանապարհին հայտնագործում են հրաշք աշխարհներ, որոնք անակնկալ բացվում են կախարդող տարիքով ու գեղեցկությամբ: Լինում է և այնպես, որ այդ աշխարհները հայտնագործվում են ծատ վաղ հասակում: Այդպես պատահեց հետագայում «Վարպետ» Մջուսույթը կրող Ավետիք Իսահակյանի հետ:

1899 թվականին 23 տարեկան բանաստեղծը հրապարակում է իր առաջին գիրքը՝ «Երգեր ու վերքեր» ժողովածուն, ուր զետեղված էին Իսահակյանի՝ պատանեկան տարիներին հյուսված երգերը: Այս գիրքը դառնում է նոր սկիզբը ոչ միայն հայ քնարերգության ճանապարհին, այլև այս գիրքը դառնում է պատանի բանաստեղծի՝ արդեն փոթորկված հոգու, արդեն սիրո սաղմը սրտի խոր ծալքերն ընկած և սիրահար հոգուց դեպի տիեզերք հասնող խոսք-ճանապարհ: Այդ սիրտ-տիեզերք կամուրջ ճանապարհը, պատանեկան հասկից մինչև ծերունական հասակ մերթ ահագնանում, զայրանում է ալեկոծ ծովի նման, մերթ էլ ծառս լինում՝ հանձնվելով նրա կախարդական ու հեշտագին տարերքին:

Սերը Իսահակյանի քնարերգության մեջ մշտապես կենդանի է եղել, նա դիտվել է որպես կյանքի աղբյուր, որպես կյանքը իմաստավորող մի զգացում: Կարդալով Իսահակյանի սիրային քնարը, մտնելով յուրաքանչյուր տողի բառերի խորքը՝ հասկանում ենք, որ նրա մեծ սերը երբեք չնվաղեց, հակառակը, նրա սերը մինչև իր կյանքի վերջը ապրեց, ապրեց՝ ապրեցնելով և ուժ տալով բանաստեղծին: Իսահակյանի սիրո երգերը բխում են սիրո տառապանք, սիրո քնքշանք, սիրո արբեցում և սիրո պատճառով էլ նրա քնարերգության մեջ գնալով ծավալվում և խորանում է մի անվերջ զրույց սրտի հետ, և նրա բոլոր երգերը, սիրո լարերն անվերջ պտտվում են

բանաստեղծի փոքրիկ, սովորական , բայց միևնույն ժամանակ զարմանալի սրտի շուրջը:

Ի՞նչ ես գազազում, իմ վիրավո՛ր սիրտ.
Որ գազազում ես, ի՞նչ պիտի անես,
Աշխարհը իրեն ճամփով կընթանա,
Դու՛ խեղճ, դու՛ անզոր, ի՞նչ պիտի անես,
Տոկա՝, համբերի՛ր, իմ վրավո՛ր սիրտ,
Վճիտ հայացքով աշխարհին նայի՛ր,
Աշխարհը, իրեն ճամփով կընթանա,
Է՜յ, վիրավո՜ր սիրտ, դու մի՛ գազազիր:

Իսահակյանի սիրո երգերի քնարական հերոսը պատմում է ի լուր աշխարհի պատանեկության տարիներին իրեն բաժին ընկած ձախորդ սիրո վշտի ու տառապանքների մասին, որոնք դարձան նրա ողջ կյանքի ամենօրյա, ամենժամյա ուղեկիցները: Մինչև խոր ծերություն հասնող նրա սիրային քնարը չծերացավ, սիրո քնարի հերոսուհին մնաց նույն սիրելին՝ սիրո այլևայլ դրսևորումներով, նույն մեծարումներով էր մեծարվում իր սիրո իշխանուհին, մեծարվում էր, ինչպես մեծարվում էր պատանության տարիներին:

Ո՞վ էր գրավել Իսահակյանի սիրտը, ո՞վ էր գողացել նրա հոգու անդորը, ո՞վ էր Ամուրի նետով սիրո Պառնասից ամուր հարվածել և սիրո լարերով պատել Իսահակյանի սիրտը: Ո՞վ էր նրա սերը գողացել՝ փոխարենը նրան ոչինչ չտալով, չանելով, փոխարենը միայն ցավ, տառապանք, հոգու կսկիծներ նվիրելով:

Իրակա՞ն էր արդյոք նա, կա՞ր, թե՞ միֆ էր ցնորական:

1891 թվականին Իսահակյանը հանդիպում է Շուշանիկ Մատակյանին, որը նաև նրա հեռավոր ազգականներից էր. «Հիշատակարանում» 1891թ. հունիսի 17-ի օրագրության մեջ գրված է.

«Դ-ների տանը պատահեցու օրիորդ Շ-ին, ողջունեցի ու նստեցի մոտը: մեր քաղաքի բոլոր աղջիկների միջից սա է ինձ գրավում: Չափազանց գեղեցիկ է՝ սև և կլոր աչքեր, վառվրուն և խելոք հայացք, վարդագույն շրթունք, դալկահար դեմք ...: Նա մի

հրեշտակ է, մի բերբնական ոգի, մի մագնիս, որ քաշում է դեպի իրեն իմ սիրտն ու հոգին: Ա՜խ, չնաշխարհիկ Շ., դու գերեցիր ինձ»...

Ո՞վ է՝ անդորր, լուռ գիշերով
Մենությունս խռովում.
Շուշան-կրծքով, լույս թևերով
Նիրհած գետը վրդովում:
Նա փերին է զմրուխտ գետի
Ցնորքներիս սիրելին.
Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազենին:

Իսահակյանի երգերի մեջ լսվում են սրտի բազմապիսի զարկեր և լիցքեր, մեղմիկ, քնքշալի ապրումներին միանում են ռոմանտիկ սլացքներ, անկման պահերին հետևում են բուռն վերելքներ:

Սիրտ-հոգի-կյանք,- ահա Իսահակյանի քնարի հիմն ու էությունը: Իսահակյանի սիրտը բազմաձև բաբախումներ ունի՝ իրարից տարբեր և երբեք իրար չնմանվող՝

«Սիրտս երկինք է»
«Սիրտս ժայռի պես ամուր, ցողի պես մաքուր է»
«Սիրտս սիրո բողբոջ կուտա»
«Սիրտս սրբազան վշտով թաթախիր»
«Սչտի մեջ է կյանքը մարդու»
«Սիրտս գոնե տիեզերքի մեջ հավերժ տրոփե»
«Սիրտն ամայի, աշխարհն ամայի»

«Իմ երգերը սրտից են բխում, ինչպես Արազը բյուրակնյ լեռներից»,-գրում է Իսահակյանը իր առաջին գրքի ստեղծման շրջանում: Եվ բանաստեղծի սիրտը սկսեց երգել:

Ցաված սիրտս երգեր հյուսեց
Երգեց անուշ ու սխուր,
Վիշտս հալվեց, արցունք հոսեց,
Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր:

Ստեղծվում է պատանի Ավետիքի և Շուշանիկի միջև նամակագրական կապ:

Արդեն էջմիածնում Ավետիքը նամակներ էր ստանում Շուշիկից: Սերն ու տանջանքը պատանի բանաստեղծի համար դառնում են կյանքի խորհուրդ: Նամակներից մեկում Շուշիկը գրում էր. «Տանջվել եմ ուզում...» - դա հենց Իսահակյանի հոգու արձագանքն է: «Այդ քնքուշ հոգին որքան շուտ է ըմբռնել կյանքի էությունը՝ բանաստեղծությունը»,- գրում է պատանի Իսահակյանը: Նա հավատում է, որ այդ սերը պիտի անթառամ լինի, և երջանիկ է այն մտքով, որ ինքն այլևս մենակ չէ այս աշխարհի-անապատում, և իրեն պատահած անախորժ դեպքերը հյուլե են երևում սիրո փոթորիկի առաջ»:

Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ Շողավոր, պայծառ հավատով զինված, Ես ողջունեցի... և վեհ, գեղեցիկ Զգացմունքներով սիտս դզրդաց:

Եվ ես գնում եմ նոր, հեռու՜ ափեր:
Եվ այս կնճիռներն – ճակատիս պսակ,
Անխոս վկա են, որ վիշտ, տանջանքներ
Ես ճաշակել եմ, որպես հաղթանակ...

Ավետիք Իսահակյանը

Ալեքսանդրապոլ վերադառնալուց հետո՝ առաջին իսկ օրերին, այցելում է Շողիկին. «Ինչպիսի՜ ջերմությամբ ինձ ընդունեց. սիրո ժպիտը հիվանդ դեմքի վրա ցոլաց. նա ժպիտ չէր՝ պրոմեթեոյան կայծ-սեր-հույս», - գրում է Իսահակյանը 1891թվականին:

Շուշիկը լիովին տիրել էր պատանու մտքերին: Այդ տարի Իսահակյանի գրիչը բեղուն եղավ, և ծնվեցին 30 բանաստեղծություններ, որոնք սիրո տվայտանքներով էին ողողուն:

Օխտը տարով հեռու քեզնից,
Քու շվաքով ապրում եմ, յա՛ր,
Օխտը տարով բաժան քեզնից,

Քու կարոտով էրվում եմ, յա՛ր.

Դարդիս դարման, յարիս մահլամ,

Կյանք ու արև յարս ուր՞ է:

17-ամյա պատանու երգերով՝ հուզառատ ու սիրատոչոր, հարստանում էր հայ քնարերգությունը:

Կուզե՞ս լինիմ վշտի ցողեր՝

Աճքերիդ մեջ շող ցայեմ,

Լուռ գիշերվա անուշ հովեր

Փունջ ծամերդ փայփայեմ:

Կուզե՞ս լինեմ վարդ-նազելի՝

Կրծքիդ վրա վառվռիմ,

Արշալույսի շողեր ոսկի

Դեմքիդ վրա փայլփլիմ:

Կուզես՞ լինիմ ծառ ու ծաղիկ

Քեզ գրկումս նինջ սփռեմ.

Թալուկ ստվեր, թովիչ թռչնիկ

Օրոր ասեմ, օրորեմ:

Ինչ-որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ,

Լինիմ երկինք ու երկիր,

Լինիմ ծով, ժայռ, արև, լուսին

Միա՛յն, միա՛յն ինձ սիրիր:

Կամ՝

Շուշան աղջի՛կ, քու գերին եմ

Կալ ու կապված սիրուդ բոցեն,

Պապաք-ծարավ էրվեցա:

Իսկ Շուշանը գավը ուսին

Դեպի ձորն է թռչկոտում

Աչք չի գցում խողճ տղին:

1891 թվականի դեկտեմբերի 23-ին Իսահակյանը գրում է. «Այսօր ստացա օրիորդ Շուշիկից երկրորդ նամակը, որքա՜ն ուրախացա: Ես այժմ երջանիկ եմ, որ կարողացա

գտնել «մեկը»՝ նմար իմ հոգուն, իմ բնավորությանը: Ես նրա մեջ եմ տեսնում իմ հոգեկան պատկերը՝ որոշ գույներով: Կյանքը թվում է ինձ անվերջ սեր... Սիրել-ապրել-տանջվել. – կյանքի խորհուրդը այս է...»:

1892թվական... Իսահակյանի կյանքի առաջին մեծ ջրբաժան: Պատանի Իսահակյանը սիրո մերժում է ստանում Շուշիկից, և փոխվում է բանաստեղծի կյանքի ընթավքը: 1893 թվականի մարտի 28-ին Էջմիածնից նամակ է գրում Շուշիկին. «Ի՞նչ գրեմ – արցունք, տանջանք, վիշտ, հեծեծանք: Թառամեցան ծաղիկները, հանգան կայծերը, ձմեռը եկավ բուք, բուրան, մառախուղ, մռայլ անապատ առանց օազիսի, ու՞ր է երկինքը, աստղերը, ծիածանը, արշալույսը – ու՞ր է, ու՞ր է անդրանիկ սերը, սերը պլատոնական: Ու՞ր է, ու՞ր...

Ես լալիս եմ, ես տանջվում եմ»:

Հոգի կուտամ, հոգի տու՛ր ինձ,
Իմ նազելի աչագեղ:
Սիրտս – սև արտ, սերդ – ալ վարդ,
Թո՛ղ բողբոջի նա այնտեղ.
Սիրտս – գիշեր, սերդ – վառ աստղ,
Թո՛ղ շողշողա նա այնտեղ...

— «Այո; քույրի՛կ, այո՛, ես էշ ոչ ոքին չեմ սիրում, ոչ ոքի համար էլ չեմ աղոթում: Սակայն, ով գիտե, կարող՞ էի երևակայել, որ այն, այն ծաղիկը, որի բուրմունքից ես արբեցած ապրում էի, թառամումէ. ոչ՛ ոչ՛, չէի կարող. մի՞թե կարող էի, մի՞թե կարող էի չսիրել «նրան» :

Ծաղիկ էի նորաբողբոջ,
Սարի լանջում, երկնի տակ,
Ինձ կդյութեր առվի խոխոջ,
Ինձ կողջուներ արեգակ:
Գիշերները աստղ ու լուսին
Վար կիջնեին երկնքեն,
Ու հեքիաթներ ինձ կասեին
Կախարդական, ոսկեղեն:

«Երբ ես, հոգնած կյանքից,

Երբ ես, զզված գոյության անմիտ կռվից, երբ ես մեռցրել էի հավատս թե դեպի մարդը և աշխարհը, ո՞վ ինձ նոր աշխարհ տվեց, ո՞վ ինձ իդեալներ տվեց, ո՞վ երկինք ու երկիր սրտումս իջեցրեց. «նա՛», «նա՛»...

Այստեղ շքեզ՝ ես ապրեցա,

Երազներով երջանիկ

Սերդ ցավեց ինձ, սևաչյա՛, -

Ես չորացա, ա՜խ, աղջիկ...

«Ես չեմ ուզում այսպես կորչել, ոչնչանալ, ես ապրել եմ ուզում, ապրե՜լ, ապրե՜լ ինչու՞՝ չգիտեմ...

Խաբուսիկ աշխարհ, խորամանկ դիմակ: Ա՜խ, եթե ես կարողանայի աստծուն, երջանիկ կլինեի: Եվ մի՞թե կա երջանկություն աշխարհի մեջ:

Ոչ՛ ոչ՛ ... չկա: Ա՜խ, ես թշվառ եմ, ապերջանին չկարեկցեք ինձ վրա: Ես փոքրոգի չեմ, ես հաղթված չեմ կյանքի կռվիդ: Չկարեկցեք», - գրում է նա 1893 թվականի մարտի 28-ին Շուշանիկին: - «Այսուհետև սիրո ոչ՛ մի շող, ո՛չ բույր ու թույր...»:

Սիրո ծալքերը սրտի խորքում գալարվում են, և հրաբխի լավայի նման Իսահակյանի հոգու խորքերից ժայթքելով՝ հորդում են սերը մերժող, հուսահատության քողով պատված բանաստեղծություններ:

Ցուրտ է օրը – բու՛ք ու խավա՛ր,

Քամին շաչում, շառաչում.

Ա՜խ, իմ սիրտս՝, խողճ, վշտահա՜ր,

Ախու՜ր, մրմունջ, լու՜ռ ու մունջ:

Լռեց քամին. շողով. շաղով

Շողաց արև, փայլեց օր, -

Իսկ դու ե՞րբ պիտ ժպտաս անամպ,

Իմ խեղճուկ սի՜րտ վիրավոր:

Ես ծերացա... մի՛ զարմանար,

Որ ես թեև դեռահաս,

Թեև դեմքն իմ վշտահար

Նոր է զգվում աղվամազ:

Մի՛ զարմանար... մտքով արդեն

Ես մեր կյանքը ապրեցի,

Ցնորքներում, որպես կյանքում,

Ես կռվեցի, սիրեցի:

Եվ ցնորքում ի՞նչ տագնապով

Ես կյանք էի ընդգրկում.

Ես գրկեցի. ի՞նչ – արյան ծով,

Լոկ գոյության մաքառում:

— «Դու՛ք ուրախացեք, դու՛ք ապրեցեք, դու՛ք սպասեցեք դարձյալ. կյանքը դեռ ժպիտ տալիս է ձեզ համար, իսկ ինձ՝ ոչ», — նամակում Շուշիկին գրում է Իսահակյանը:

Անտուն գիշերնե՞ր,

Անքուն գիշերնե՞ր,

Քույրի՛կ, քեզ համար

Այված քո սիրով

Կարոտիդ երով

Ես շատ լացեցի,

Ես շատ տանջվեցի-

Անտուն գիշերնե՞ր,

Անքուն գիշերնե՞ր...

Այո՛, Իսահակյանը շատ խորն է ապրել սիրո ողբերգությունը, այն ողբերգությունը, որը նրա ողջ կյանք ողբերգությունն էր: Եվ այդ ողբերգու-երգերը դարձան իսահակյանական սիրո գոհարներ, իսկ Սաադիի խոսքերով ասած՝ մարգարիտների, որոնք ծնվում են սիրո վերքից, և խունկ, որն այրվելով է իր անուշ բույրով լցնում շրջապատը:

Հիմա, որ մենք վայելում և ըմբոշխնում ենք այս չքնաղ քերթվածքները, պարտական ենք Իսահակյանի այն մեծ սիրուն, որը միշտ դառնացած լացեց, անձայն հեկեկած և խունկի պես այվեց և այրվելով հասավ մեզ ու իր բույրը լցրեց ու դեռ լցնում է հայ քնարերգության անդաստանը:

1893թ. մարտի 26-ին Իսահակյանը իր «Հիշատակարանում» գրել է. «Որքա՜ն դատարկ կլիներ կյանքը, եթե չլիներ նրանում սիրո դրաման, տրագեդիան, կատաստրոֆը»: Թումանյանի խոսքերով ասած՝ Իսահակյանի սիրային բանաստեղծությունները կենսագրություններ ունեն, պատմություն ունեն:

Իսահակյանի բանաստեղծությունների տողերում է թաքնված հենց իր՝ Իսահակյանի բանաստեղծական հոգին: Ոտանավորների գրության շարժառիթը բանաստեղծի Շուշան-յարի անսպասելի ամուսնությունն է եղել:

1893 թվական: Իսահակյանը Վիեննայում էր: Նա նամակ է ստանում իր քրոջից, որ Շուշիկը ամուսնացել է, և իրենք էլ ներկաեն եղել հարսանիքին:

Այս ծանր լուրը ազդում է բանաստեղծի վրա և նա գրում է.

Դա՛րդս լացեք, սարի սմբուլ,
Ալվան- ալվան ծաղիկներ,
Դա՛րդս լացեք բա՛ղի բլբուլ,
Ամպողող երկնուց զով-հովեր...

Երկինք-գետինք գլխուս մթան,
Անտուն-անտեր կուլամ ես.
Յարիս տարա՜ն- ջանիս տարա՜ն,
Հոնգու՛ր-հոնգու՛ր կուլամ ես...

Ա՜խ յարս ինձ հանեց սրտեն,
Անճար թողեց ու գնաց.
Արտիս սավդեն – խորունկ յարեն
Անդեղ թողեց ու գնաց:
(29/08, Վիեննա)

Իսահակյանի հոնգուր-հոնգուր լացացնող անսիրտ մարդը հայտնի մանկավարժ Տեր-Միրաքյանն էր, որն ավարտել էր Ենայի համալսարանը վերադարձել էր Ալեքսանդրապոլ՝ ամուսնանալու նպատակով: Շուշիկի ծնողները, շլացած այդ երիտասարդի դիրքից ու փայլից, առաջարկը չէին մերժել: Հովհաննես Տեր-Միրաքյանը

34 տարեկան էր, տեղյակ էր Շուշան- Իսահակյան սիրո պատմությանը: Շուշիկը նամակներից մեկում խոստովանել է՝ «Սերս անհաջող դուրս եկավ, բամբասանքների առիթ եղա, ատելության զոհ, ես աշխատել եմ լինել ծածկամիտ, խորհրդավոր, բայց չի հաջողվել» (1893թ 25/III)

Շուշանիկի բանաստեղծությունը՝ գրված 1893թ. հունիսի 23-ին, վկայությունն է վերոհիշյալ տողերի:

Մի խուլ հառաչ է հնչում ափերից,
Ալեկոծ ծովի՝ նա միակ բողոք,
Հու՞յս է որոնում տառապած ալիք,
Ու ժայռի լանջը ծեծում անողոք:
Սիրտս դատարկ է, մի ժայռ է դարձած
Անողոք կանքի կռվում արնոտված:

Իսահակյանը Շուշիկի հետ ոչ միայն նամակներ է փախանակել, այլև բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը կրում են հետևյալ վերնագրերը՝ «Նվեր սիրելի քույր Շուշիկին իր եղբայր Ավետիքից»:

Բայց ուրացար ինձ, նազելի՛,
Վիշտը ճնշեց իմ կուրծքը,
Մարեց սերն, մարեց կյանքի
Վառ ցանկության կրակը:
Եվ դու անհոգ, որպես թռչնիկ,
Շիրմիս վրա ճախրում ես,
Արդյոք անգութ, անվիշտ քույրի՛կ,
Խողջ եղբորդ հիշու՞մ ես:

Շուշիկն էլ իր հերթին անպատասխան չի թողել «եղբոր» չափածո նամակ-ուղերձը և նվիրել է նրան «Կույսի գերեզմանը» ոտանավորը:

Էլ քեզ չեմ սիրի,
Էլ չեմ դառնալու
Քո հիշատակն եմ,

Միայն պահելու
Երբ որ գիշերին
Ցուրտ քամին փչէ,
Մանրիկ անձրևը
Մեղմաբար տեղա,
Միայնակ կյանքում
Ես պիտի զգամ
Սիրո տանջանքիս
Սառը գերեզման:
Մահ՝ տածած սիրուս,
Մահ՝ արցունքներուս.
Եվ միայն՝ կռիվ,
Խավարի դաշտում.

Այս փոքրիկ բանաստեղծություններն էլ ծնունդ են նամակագրության, և դեռ ավելին ամեն մեկը մի փոքրիկ, բայց խոսուն նամակ է:

1894թ. Շուշանիկ Մատակյանը և մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանը ամուսնացան: Դա այնպես է տակնուվրա անում բանաստեղծի հոգին, այնպիսի ցասում է առաջ բերում նրա մեջ, ասես մարդիկ անլուր ոճիր են գործել իր հանդեպ և իրեն մնում է արյան վրեժ լուծողի դերը: «Հիշատակարանում» մերժված սիրահարը բացում է հոգու ծալքերը և մեկ մեկ դուրս հանում այնտեղից կսկիծն ու ցավը:

«Երեկ գիշեր մինչև չորսը չեմ քնել, հետո քնեցի, որովհետև ուժասպառ եղա... Տանջվեցի, լացեցի, հուսահատվեցի ու գլուխս պատին խփեցի... Շուշի՛կ, միայն քեզ համար այսօր էլ եմ լացել ու շատ տանջվել: Ես վճռել եմ – պիտի նամակ գրել Շուշիկի մարդկանց և խնդրել ու ստիպել, որ ապահարզան տա, իսկ եթե չտվեց, ես էլ չեմ կարող տանել... այն ժամանակ կդիմեմ խիստ միջոցների – արյուն... Ես ինձ կսպանեմ ու իմ արյունով կներկեմ նրանց լիրբ ամուսնության խայտառակ անկողինը... Անեծք կյանքին ու զարգացմանը – անե՜ծք, անե՜ծք»:

Այս գրառումը Իսահակյանը նամակի տեսքով ուղարկում է իր այնքան ատելի ու միաժամանակ այնքան սիրելի Շուշիկին: Այս ապրումներից է ծնվել հետագայում՝ 1897 թվականին, Հառիճում գրված «Ա՜խ, իմ ճամփեն մոլոր գնաց» բանաստեղծությունը:

Անցել է 4 տարի Շուշիկի ամուսնությունից, բայց գնալով ավելի է մխում բանաստեղծի սիրտը ավելի է մորմոքվում միտքն ու հոգին: Խորն է Իսահակյանի հոգու տառապանքը:

Ա՜խ, իմ ճամփեն մոլոր գնաց,
Անտակ ծովին դեմ առա,
Վա՜խ, իմ սերս անցա՜վ, գնա՜ց,
Ետ կանչելու ճար չկա:

Դուման եկավ ծովը ծածկեց,
Էն խաս հավքերն ի՞նչ եղան.
Դարդս եկավ, սիրտս ծածկեց.
Էն ալ-վարդերս ի՞նչ եղան:

Այս խոսուն, ցավով ու արյունքով լի բանաստեղծությունից առաջ Իսահակյանը գրել է մի բանաստեղծություն ուր ծովի անսահմանության առջև է բացում իր խոցված հոգին: Դուրյանի «Լճակի» և Իսահակյանի այս բանաստեղծության միջև ընդհանրություն կա: Երկուսն էլ՝ և՛ Դուրյանը, և՛ Իսահակյանը, տիեզերքի տակ չգտան մեկին, որի առջև բացեին իրենց վշտալլուկ սրտի գաղտնիքներն ու տառապանքը: Նրանք իրենց հոգու տխուր և ցաված սրտերը բացեցին տիեզերքի անլուր, անխոս, բայց «հասկանալու» և «լսելու» ունակություն ունեցող անձ-առարկաներին՝ մեկը՝ շճակին, մյուսն էլ՝ ծովին:

Աշխարհ մտա, վարդ սիրեցի
Անսեր վարդը սիրտս ծակեց,
Մենակ ապրա, արյուն լացի,
Աստղ էլ երկնում թառամեց...
— Ծո՛վ, սիրտդ բա՛ց, - բաց խորն ու լայն
Շատ դադրած եմ, ծոցդ կուգամ:

Ինչպես կուզեմ սիրտս թաղեմ
Ծովի մռայլ, մութ խորքում
Քեզնից հեռու՛, վիշտս պահեմ
Գաղտնի տեղում՝ շատ թաքուն
Ծովը միայն վիշտս իմանա,
Ծովը շատ մեծ սիրտ ունի,
Սրտանց կուլա սիրուս վրա,
Հոգու խորքից կհուզվի:

1897թ. Ալեքսանդրապոլում գրել է՝

—Սև աչերն շատ վախեցիր,-
Էն մութ, անծիր գիշեր է
Մութը ա՛հ է, չարքեր շատ կան
Սև աչերը մի՛ սիրե...

1888թ. Օդեսայում Իսահակյանը գրում է «Սիրեցի յարս տարան» բանաստեղծությունը:

Սիրեցի յարս տարան
Յարա տվին ու տարան
Էս ի՞նչ զուլում աշխարհ է
Սիրտս պոկեցին ու տարան:
Ցավս խորն է, ճար չկա
Ճար կա, ճար անող չկա
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սրտացավ ընկեր չկա:

Լա՜վ օրերս գնացին՜
Ափսո՜ս ասին, գնացին
— Էս ի՞նչ զուլում աշխարհ է,
Սև դարդերս մնացին:

Ճիշտ է, այս բանաստեղծությունները գրվել են Շուշիկի ամուսնությունից տարիներ հետո, և Իսահակյանը, ինչպես երևում է բոլոր բանաստեղծություններում, երբեք չհաշտվեց Շուշիկի սիրո կորստի հետ: Իր բոլոր բանաստեղծությունների սկիզբը, հիմքը կարծես ամփոփված է 1904թ. գրված նամակում, որի յուրաքանչյուր տողը մի բանաստեղծության ծնունդ է, արձագանքը: Շուշանիկ Մատակյանին գրված այս նամակը կարծես Իսահակյանի սիրո բանաստեղծություններին կյանք տված կայծն է, որը հետո դարձավ բռնկուն կրակ ու ողջ կյանքում այրեց բանաստեղծ Իսահակյանի սիրտը:

«Ինչու՞ եմ գրում, ի՞նչն է ստիպում ինչ գրել. – սիրել-ես քեզ չեմ սիրում, ատել – ես քեզ չեմ ատում, բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար: Ես ուզում եմ քեզ հոշոտել, բայց ուզում եմ քեզ հազար – հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել, հավիտյան ապրել, և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել, անզոր եմ, ամբողջ էությունս բարի է... և որ ամենաողբալին է, ես դեռ քո ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ, երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում եմ և պատրաստ եմ ոտքերտ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը ես մրրիկ եմ դառնում»:

Ծովն ալեկոծ, սանձակոտոր,
Իր քար շրթերն է կրծում.
Ա՜խ իմ վիշտը՝ մի չար ուրուր,
Սիրտս է անդուլ քցքցվում:
Գնա՜մ, գնա՜մ կորչեմ անդարձ,
Փոթորիկի մեջ ընկնեմ,
Անդունդներին խողճ սիրտս տամ
Չար ուրուրից ազատվեմ:

«Եթե ամենակատաղի թշնամուս սիրեի, իմ՝ դեպի քեզ մրրկող սիրուս մի չնչին մասով, թշնամիս ինձ կգրկեր, կգուրգուրեր և կմխիթարեր...

Իսկ դու-դու գիտեիր իմ դժոխային տանջանքները բայց մոտ չեկար, մի անուշ խոսք չասեցիր: Ես քեզնից էլ՛ սեր չէի ուզում, բայց քո մեջ մարդ տեսնել կուզեի, և որ՝ դու իմ մեջ մարդ տեսնեիր»:

1904թ. հոկտեմբերի 16 –ին գրում է.

Քույր իմ նազելի, նայիր քո դիմաց,
Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել,
Ա՜խ, նվիրական ինձ քո գիրկը բաց,
Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել,
Քնքուշ ձեռքերով աչերս սրբիր
Մի՛ թող ինձ լալու – ես շա՜տ եմ լացել
Ճակատիս մռայլ՝ մշուշը ցրիր
Եվ գուրգուրիր ինձ, ես շա՜տ եմ լացել:

Կամ՝

Մեկը չեղավ, որ իմանար վշտերս,
Քնքուշ ձեռքով դարման աներ վերքերիս,
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս,
Անուշ բույր տար, վարդի գույն տար երգերիս:
Բայց ես կյանքում շատ սիրեցի ու լացեցի,-
Մեկը չեղավ, որ ամոքեր վշտերս,
Սիրող սրտի ծարավ, ծարավ մնացի,
Մեկը չեղավ, որ գուրգուրեր վարդերս...

«Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել – գիտե՛մ, գիտե՛մ. բայց այդ քեզ իրավունք չեր տալիս ինձ, երբ ես քո ոտքերի տակ, տիեզերական հզոր սիրուցս ստորացած,ընկած էի, ծաղրելու արևամարհելու, դուրս շպրտելու. չէ՞ որ, Շուշի՛կ ջան, ես մարդ էի, չէ՞ որ կային օրեր, որ դու ինձ գոնե հարգում էիր, «թանկագին» և «ջան» խոսքերով խաղում էիր հետս: Եվ այդ բոլորից հետո դու ինձ ոտակ տակ տվիր. խփեցիր ջահել սրտիս մեջ դաշույններ, չհանեցիր նրանց, թողիր սրտիս մեջ – մնացին, ժանգոտվան, և արյունովս իմ քայլափոխերս ծածկեցին, բայց դու մնացիր դեպի ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ ...»:

Շուշիկը հարգել է բանաստեղծին, հարգել նրա զգացմունքները, խոստումներ չի տվել, Հովհաննես Տեր-Միրաքյանին է սիրել, ո՞րն է նրա մեղքը:

Սա էլ Շուշիկն է սիրել ու սիվել փոխադարձաբար, սրա մեղքը ո՞րն է:

«Բայց լալիս եմ հիմա ու սրտիցս արյուն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քու երեխաների համար, ինձ մի՛ անիծիր, իմ անունս երբե՞ք, երբե՞ք, մի՛ հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ, աղաչում եմ քեզ: Պետք չէ հիշել այն տաճարումմի ուրիշ Աստծո անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չպետք է այդ տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի. քո հոգու տաճարից թող ես ելնեմ դուրս՝ ես օտար, չճանաչված Աստված եմ այդտեղ:

Աղաչում եմ քեզ...

Ես էլ կվարվեմ քեզ հետ այդպես:

Դու ինձ համար մեռա՞ր, մեռա՞ր:

Արտասվելով համբուրում եմ քու գերեզմանը և ճամփա ընկնում՝ նոր Աստված գտնելու» Ավետիք 1904թ.

Դ. Դեմիրճյանը Իսահակյանին հասցեագրած մի նամակում հետևյալն է գրել. «Է՞հ, անտեր մարդիք ենք բանաստեղծներս; Շողիկ-Շուշանը մենք ենք սիրում, խաշխը խլում, տանում, դարդերից երգեր ենք գրում, միայն մի կտոր ծափ են խոստանում – էս էլ կորցրած յարի գինը, արնագինը»:

(1898թ 15/III)

Իսահակյանը երկար տարիներ նամակագրական կապ է ունեցել նաև Աննա Բերոյանի հետ

1904թ. նոյեմբերի 9-ին գրված նամակում Իսահակյանը պատասխանել է Աննա Բերոյանի հարցերին «Արդյոք ի՞նչը ստիպեց քեզ՝ չարախնդաց Միֆեստոֆը, որ դու դիմում ես ինձ այսպիսի մմի հարցով – «Ո՞վ ես դու, իմ պահապան հրեշտակը, թե կործանող սատանան»:

— «Ո՞վ եմ ես»... Ես միայն այն կասեմ քեզ և այս միայն մի անգամ կասեմ և ամբողջ կյանքիս մեջ միայն մի անգամ կասեմ քեզ:

— «Ես սիրում եմ քեզ, Աննի՛կ, Աննի՛կ ջան, իմ շատ սիրելի Աննիկ»: Եվ այս իմ հոգու խորքերից քեզ խոստովանելուց հետո այսուհետև քեզ ամեն ինչ պարզ պետք է լինի ... ասա՛, ի՞նչ կարող է անել սիրող սիրտը, ինչի՞ առաջ կանգ կառնի սիրող սիրտը: Ես անկարելին կարելի կդարձնեմ քեզ համար, ես 40 գլխանի դևին կսպանեմ քեզ համար, ես իմ կյանքը կտամ քեզ համար, ուրիշ ի՞նչ ես ուզում, մի՞թե այսուհետ կարող

ես դու տատանվել, կասկածել դեպի ինձ: Դու դեն շպրտիր քո թանկագին գլխից այն վատ մտքերը, թե ես նմանություն եմ գտնում քեզ քու քրոջ հետ: Աստված չանե, որ դու նրա նման լնես: Նա չար է, նա անսիրտ է, իմ ապրած հոգին զգաց քու մեջ մի երկնային կոգու ներկայություն, մի չքնաղ մաքրություն. ես կարոտ եմ այդ հրեշտակային գուրգուրանքին և անմեղության: Ես լալ եմ ուզում քու մաքուր ձեռքերի վրա, ես որոնել եմ միշտ մի ոսկեղեն, մի լուսեղեն ասուպի, որ անցներ իմ հոգու երկնքով, Եվ անցավ, ու այն դու ես»

Ավետիք:

Ո՞վ էր Աննա Բերոյանը: Աննա Բերոյանը Գյումրիում ճանաչված Մատակյան ընտանիքի դուստրն էր, Իսահակյանի բանաստեղծություններից մեզ այնքան ծանոթ Շուշիկի կրտսեր քույրը:

Շատերը գիտեին Իսահակյանի առաջին սիրո՝ Շուշիկի մասին, բայց քչերին է հայտնի այն նվիրական, քնքուշ զգացմունքները, որ Վարպետը տածել ՝ Աննիկի հանդեպ:

«Ես ըմբռնեցի, որ գործ ունեմ մի լուրջ հոգու հետ,-գրում է Իսահակը՝ անը,- ես քեզ երեխա էի կարծում, բայց հիմա զգում եմ, որ դու խորը և երազուն մարդ ես, որ դու այս աշխարհից չես, որ քու աչքերի մեջ երկնքի լույսից կա, որ դու ճառագայթ ես...»:

Երկուստեք նամակերը վերածվում են սիրո խոստովանության:Նամակներից երևում է, որ Վարպետը սկզբում աշխատել է իր մեջ զսպել այդ զգացմունքը, բայց այն գ նալով խորանում է, և առաջին սիրո մոխիրների վրա մի նոր հրդոհ է բռնկվում՝ նախկինի պես զորեղ, նախկինի պես զուլալ ու պայծառ: Հանձին Աննիկի՝ Իսահակյանն ասես տեսնում է իր անուրջների աղջկան՝ Շուշիկին, ու կարծես վերածվում է նախկին սերը, որ անթեղված կրակի պես դեռ մլմլում է նրա հոգում:

Եվ այդ պայծառ զգացումից ծնվում է առաջին երգը՝ նվիրված Անիկին»:

Նրանք իմ կյանքը երազ դարձուցին.

Կուսական, մաքուր աչքերը անուշ,

Ցամակած սիրտս նորից լացուցին,-

Հոգիս վառեցին երգերով քնքուշ,

Շուջս փռեցին աստղիկ ու ծաղիկ...

Կուսական մաքուր աչերը անուշ:

Իսահակյանը հանձին Աննիկի, գտել է իր երազ աղջկան և ամբողջովին նվիրվել նրան:

«Իմ անգին, իմ պայծառ Աննիկ ջան, իմ ընկեր, իմ մաքուր սեր, ասա ինչ որ կուզես՝ ես կատարեմ քեզ համար, մեռնել քու երազների համար: Դու իմ շքե՛ղ, իմ զուլալ երա՛զ... Եղի՛ր միշտ այդպես լավ, այդպես մաքուր, այդպես կուսական: Թող ոչ ոքի շունձը չդիպչի քեզ, ոչ ոքի ձեռքը չհասնի քեզ, և իմ հոգու համար, ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քու կապույտ, քու լազուր, քու ջինջ հոգում»:

Դու ջինջ և հեզ մի թիթեռ ես,
Եվ նուրբ և սուրբ թևերով
Սիրտդ վճիտ թռվրում ես
Գե՛շ, գա՛րշ մարդկանց վրայով
Դու՛, որ մաքուր մի թիթեռ ես,
Ա՜խ, մեր կյանքի ճահճի մեջ
Պիտի ընկնես, պիտի նեղվես:

1905թ. ապրիլի 7-ին Աննիկին հասցեագրված նամակում Իսահակյանը գրում է. «Այժմ ես քու առաջ այս ու միակ ելքն եմ դնում – եթե դու ինձ սիրում ես, եթե ես քեզ համար անգին եմ և անփոխարինելի և քու իդեալն եմ, եթե ես քու համար բարձր եմ և քու մորից, և՛ քու քույրերից և՛ քու փեսաներից, այն ժամանակ ձերոնց հայտնիր այդ սերը – քու սերը, և այն ժամանակ դու կլինես իմ հոգու թագավորության թագուհին, իմ սրբությունը, իմ պոեզիան, արևը: Այն ժամանակ ես կլինեմ քու պահապան հրշտակը, քու անձնազոհ ոգին՝ միշտ հավատարիմ, միշտ անդավաճան և միշտ աստվածային: Սա ոչ թե պայման եմ դնում, այլ պահանջ՝ իմ սիրո պահանջ. սիրո գինը սերն է, և իմ սերը այդպիսի սեր է պահանջում. ընդունա՞կ ես այդ գինը տալու – մենք ընկերներ կմնանք ամենավեհ մտքով հասկացած(ամուսնության մասին ոչ մի խոսք) Ես կարող եմ սիրելու՝ մահից զորեղ սիրով, և եթե չեմ գտնում այդպիսի մի սիրտ, ես իմ սրես վերքի պես կպահեմ հոգուս և կնկնեմ թափառելու: Մի՛ թող ինձ թափառելու, սիրի՛ր ինձ աստվածներին վայել սիրով, պահի՛ր ինձ քու հոգում, իմ լա՛վ Աննիկ, և մղի՛ր ինձ դեպի բարձրունքներ, դեպի կատարելություն: Աննիկ ջան, հոգի՛ ջան, մեր սերը թող

լինի ոչ այս աշխարհից, հողեղեն չլինի, սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռու, իրար սրտի մեջ»:

Սիրտդ սրբազան վշտով թաթախի՛ր
Հեռավոր ափեր գնա՛, թափառի՛ր,
Անհագ որոնի՛ր մի վեհ ընկերի,
Սիրի՛ր, բայց սիրուն մի լինիր գերի,
Սիրի՛ր, բայց և թող, և նորից գնա,՛
Ազատ ու մենա աշխարհիս վրրա
Եվ երազ մի վա՛ռ, շքեղ, սուրբ ու վեհ
Այս հողի – երկրից հոգիդ թռցնե
Կարոտով ձգտիր աստղերին անշեջ
Եվ մեռի՛ր աստղե – ոլորտների մեջ:

«Իմ նպատակը, Աննի՛կ, սիրելիս՛ - հավիտենական սիրո մեջ է, որ ապրում է իմ բոլոր ապրումների մեջ, որից ինձ ոչ ոք չի կարող զրկել... Նա կապրի իմ գերեզմանից հետո էլ դեռ իմ անմահ ատոմների հետ...

Ժամանկաը իր վախճանին կհասնի,
Եվ արևը մի բուռ մոխիր կդառնա,
Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ:

«Ես ուզում եի այսպես կամ այնպես վերջացներ մեր մեջ այս անորոշությունը՝ կամ իրար մոտ, կամ հավիտյան բաժան. և ես դրա համար շատ տեղիքներ տվեցի քեզ, առաջարկեցի քանի՛- քանի՛ անգամ նշանվել: Դա և ընդունեցիր, և՛ մերժեցիր: Բայց վերջը մերժեցիր, և ես աշխատում եմ գռեհիկություններ անել – ծաղրել սեր, բարեկամություն, սիրտ, զգացմունք: Կուզեի քեզ միշտ սիրել՝ առանց տիրապետելու, կուզեի քեզ սիրել և չամուսնանալ հետդ, բայց և զգում եմ, որ սա անխղջություն կլինի իմ կողմից, մարդիք ուրիշ կերպ կբացատրեն և կյանքում կտուժես՝ իմ պատճառով, չարաչար: Ես ինքնս չգիտեմ՝ ինչ եմ անելու, թողնում եմ քո վճռին, արա՝ վոնցվոր ուզում ես, մեղքը քո վիզդ,- կուզե՞ս, կամուսնանանք, կուզես՝ չէ, կուզես՝ բաժանվենք. . .

Ուրեմն՝ վճռիր նշանվենք, և վերջանա այս ձանձրալի դրությունը:

Ես ատում եմ ամուսնությունը, բայց քեզ հետ տանելի կլինի, և մանավանդ, որ դու ինձ շատ ես սիրում և որ ես չեմ ցանկանա ուրիշի սիրտը փշրել. . . »։

Սակայն Աննիկի սերը նույնքան զորեղ չի, զոհաբերվելու ընդունակ չի։ Նա անվճռական է, միջավայրն ավելի ուժեղ է գտնվում, այն երկրորդ անգամ առհամարում է բանաստեղծին, ցնդում է նրա նվիրական երազը՝ խոր վերք բացելով առանց այն էլ նրա վիրավոր սրտում։

Կնոջն ուզեվի հավատալ նորից
Լալ ու երազել առաջվա նման,
Բայց արյունոտվեց խեղջ սիրտս նորից,
Եվ վորբ մնացի և թափառական։
Սեր՛, մնաս բարով, էլ քեզ չեմ նայի,
Չեմ բախի յառդ ունայն քամու պես,
Բայց կուզենայի հավիտյան լայի,
Եվ չցամաքեր արցունքը սրտես։

Դու չար սիրտ ունես Շուշիկի պես, նա ինձ անսահմանորեն տանջեց, բայց տարիներ հետո ներողություն խնդրեց ու զղջաց. . . Հիմա էլ դու ճիշտ և ճիշտ նույն խաղն ես խաղում ինձ հետ։ Քեզ 5-6 նամակ եմ գրել, խոստովանել սերս, իսկ դու այդ բոլորը եղած-չեղած ես համարում և լսում ես ձեր շրջանին։ Ոչխար և անբարոյական մարդիկ են ձերոնք, ես արհամարում եմ նրանց, և եթե դու լսում ես նրանց, գնա՛, հեռացի՛ր ինձնից, քեզ համար Ավետիք չկա, դու չես կարող ապրել նրա երկնքում, դու երկթի ծնունդ ես։

Նա չի կարող ապրել քու հոգում – դա հասարակ կնոջ մի խորամանկ ու կապրիզնի դժոխք է. չես կառող հասնել Ավետիքին, չես արժանանա նրա սիրուն – նա քեզ համար կյանք էր զոհում, իսկ դու՞ - ո՞վ ես դու. . . դու արժանի չես նրա հոգում ապրելու, քու տեղը մի վաճառականի կամ մի ինժեների զզվելի սիրտն է, գիրկն է. . . »։

Ավա՜ղ, լուսնի տակ և վեհ բսն չկա
Ամեն ինչ կոպիտ, բիրտ, անասնական ,
Աննյութ, անմարմին, անկիրք սեր չկա,
Ա՜խ, մաքուր սերը երազ է միայն։

«Անցավ ասկի արևը, եկավ գիշերը, և չկա երազտ, չկա Ավետիքը։ Նա վեհափառ սարերի արծիվ է նա կայծակ է մռայլ ամպերի մեջ. . . նա բանաստեղծ է, ստեղծագործող է։ Ահա նա փշրեց իր կուրծքը, խրեց մատները, հանեց քու սերը իր սրտի միջից, և շպրտեց շան ու գիլու առաջ. . .

Դու մեռար նրա համար, արդյոք ինչպես պիտի հարություն առնես, արդյոք կարո՞ղ ես հարությունառնել, արդյոք ուզու՞մ է նա, որ հարություն առնես. . . »։

Ավետիք

Բարձր լեռների արծիվը մեկ-մեկ

Ագահ ագռավից ցածր կթռնի

Սակայան դաշտերի ագռավը երբեք

Հզոր թռիչքին նրան չի հասնի։

-«Կարող է պատահել,- գրում է նա Արիստակես Տերտերյանին գրած նամակում,- որ սարեիր արծիվը մեկ-մեկ ավելի ցած թռչի գիշակեր, ագահ ագռավից, բայց չէ՞ որ ագռավը երբեք չի կարող սարերի արծվից բարձր կամ հավասար թրչել։

(Ի դեպ, ասեմ, որ Արիստակես Տերտերյաը մեղադրում էր Իսահակյանին Աննիկի նկատմամբ զգացմունք ունենալու համար)։

Իսահակյանի վերջին նամակը Աննիկին թվագրված է 4/VIII 1905թվական։ Վարպետը թեև սպասում էր պատասխանի, բայց Աննիկի սառնությունը ակնհայտ էր։

Դու մերժեցիր ինձ, չկանչեցիր ետ։

Եվ անցան տխուր, տարիներ տխուր,

Եվ հեռվից վախով, հույսերից թափուր,

Նայում էի քեզ, մենակ վշտիս հետ։»

Սրանով էլ ընդհարվում է Աննիկի և Իսահակյանի նամակագրությունը։ Իսահակյանը խզում է կապերը Աննիկի հետ ու դառնացած սրտով հրաժեշտ տալիս նրան։

Բայց, իհարկե, Վարպետը չմոռացավ իր սերերը։

«Տեսա Շուշիկին, հիվանդ, ծերացած, կմաղքացած։ Եվ համեմատել՝ այն ծայրը և այս ծայրը։

Զարհուրելի է։

Լսեցի մահը 21/X – 1944թ։

Ժամը 2-ին

Հուր հավիտյան մինչև մահ, գերեզման չեմ մոռանա ես նրան։ Հիմա ես կարող եմ ասել, որ իմ կեսը մեռել է։

Իսկ Աննի՞կը։

Ծերության օրերին՝ Լենինականում եղած ժամանակա, ալեզարդ բանաստեղծը երբեմն այցելում էր Աննիկին։ Չմոռացավ և Աննիկը։ Նա մինչև իր կյանքի վերջը, սրտի խորգում անթեղված պահել է բանաստեղծի հանդեմ տածած ջահել օրերի նվիրական սերը։ Պահել է Վարպետի նամակերը որպես սուրբ մասունքներ։

Ասում են՝ որ իր կյանքի վերջին տարիներին՝ գրեթե ամեն օր, երբ քաղաքի վրա իջնում էր երեկոն, նա փակվում էր իր սենյակում, սրբազան երկյուղածությամբ բացում էր Վարպետի նամակները, խոր լռության մեջ կարդում նորից ու նորից, երկա՛ր – երկա՛ր նայում դրանց, ասես վերանում էր իրականությունից հուզվում էր ու արտասվում իր անցած ջահելության, կորցրած սիրո, խորտակված երազների համար։ (Աննա Մատակյանը մահացել է 1960 թվականին 74 տարեկան հասակում)։

Բաղտը չժպտած սիրահար Իսահակյանին, անողոքաբար ճլատ եղավ իր հանդեպ, բայց շռայլորեն առատաձեռն եղավ բանաստեղծ Իսահակյանի հանդեպ, թեև նա կուզենար, որ հակառակը լիներ։

Երիտասարդ, գրեթե պատանի՝ 18 ամյա Իսահակյանը կուզենար ոչ՛ իր անհույս սիրո տառապանքը կրել, ոչ՛ էլ սիրային քնարերգության գլուխգործոցներ ստեղծեր այքան թանկ գնով։

Կարոտ կեցա կնոջ սիրուն-
Սրտի ոսկե արևին,
Պապակ կեցա մութ սարերին-
Բաշը փրփուր նժույգին
Կյանքս անցավ թևերը թափ
Սիրտս կոտրած սազի պես,
Ա՛խ մահվան պես, սև մահվան պես,
Իմ դարդե՞րս, դարդե՞րս։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավ. Իսահակյան /1, VI հատոր
2. Ռուբեն Զարյան՝ «Ավետիք Իսահակյան»
3. Հ. Ղանալանյան՝ «Հուշ դիմանկար»
4. Ավ. Իսահակյան՝ «Հիշատակարան»